ԱՄՓՈՓ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«ԿՈՆԴ» ԹԱՂԱՄԱՍԻ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ 2-ՐԴ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի «Տնտեսական արձագանքման ծրագիրը և գործողությունների պլանը հաստատելու մասին» N 142-Լ որոշման N 2 հավելվածի 3-րդ «Մ3. Կոնդ թաղամասի զարգացման ներդրումային ծրագրի ակտիվացում» կետով սահմանված միջոցառման իրականացման շրջանակում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2021 թվականի մարտի 10-ին հայտարարվել է Երևան քաղաքի Կոնդ թաղամասի վերակենդանացման հայեցակարգի միջազգային բաց մրցույթ: 2021 թվականի սեպտեմբերին կայացել է մրցույթի ժյուրիի ամփոփիչ նիստը, որի ժամանակ ներկայացվել են ժյուրիի անդամների կողմից 1-ին փուլի համար ներկայացված աշխատանքների գնահատականներն ու կարծիքները՝ համաձայն սահմանված ձևաչափի:

2024 թվականի մայիսի 5-ին հայտարարվել է Երևան քաղաքի Կոնդ թաղամասի վերակենդանացման հայեցակարգի միջազգային բաց մրցույթի երկրորդ փուլի մեկնարկը: Մրցութային փաթեթների հանձնման վերջնաժամկետ հայտարարվել է 2024 թվականի հոկտեմբերի 10-ը: Սահմանված ժամկետում մասնակիցների կողմից ներկայացվել է 3 աշխատանք: Կայացել են ժյուրիի 3 նիստեր, որից հետո էլեկտրոնային եղանակով ժյուրիի անդամների կողմից ուղարկվել են գնահատման ձևանումշի լրացված տարբերակները:

էլեկտրոնային եղանակով ամփոփվել են 2-րդ փուլի արդյունքները, որի համաձայն.

Բացարձակ հաղթող (սահմանված բացարձակ ամենաբարձր գնահատականներ ամենաբարձր միավոր հավաքած՝ գնահատման բալերի ¾-ը) աշխատանք չի սահմանվել:

- Երկու աշխատանք՝ գնահատման արդյունքների 100 միավորի տարբերությամբ զբաղեցրել են 2-րդ տեղ, մասնավորապես ծածկագիր՝ 5364957 – 514.7 միավոր, ծածկագիր՝ 4162727 – 423 միավոր:

- Մեկ աշխատանք զբաղեցրել է երրորդ տեղ, մասնավորապես ծածկագիր՝ 6269606– 262.6 միավոր:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին մրցույթին մասնակցելու համար և տեղեկացնում, որ 2-րդ փուլի ավարտից հետո բոլոր մասնակիցներին կհանձնվեն մրցույթին ներկայացված աշխատանքների կատալոգ և մասնակցության հավաստագիր, իսկ 2-րդ փուլի երկրորդ և երրորդ տեղերը զբաղեցրած մասնակիցներին՝ դրամական պարգևներ:

ՀՀ քաղաքաշինության կոմիտե

Կոմիտեի նախագահ՝ Եղիազար ՎԱՐԴԱՆՅԱՆ

Կոնդ թաղամասի վերակենդանացման հայեցակարգի բաց միջազգային մրցույթի ժյուրի.

Քարտուղար՝ Հարություն ՂԱՍԱԲՅԱՆ

25.12.2024 թ.